ԻՆՔՆԱԹԻՌԸ ԱՌԱՆՑ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻ

Posted on April 8, 2021 by Keghart

Category: Opinions

Կարեն Մկրտչյան, Երևան, 8 Ապրիլի 2021

Հայ ռազմագերիներին տուն վերադարձնելու նպատակով Բակու մեկնած ինքնաթիռն Ադրբեջանից Հայաստան վերադարձավ առանց հայ գերիների: Ըստ աղբյուրների, օդանավում եղել է ՌԴ խաղաղապահ զորախմբի հրամանատար Ռուստամ Մուրադովը: Օդանավակայանում հավաքված գերիների ծնողներն ու հարազատները խիստ վրդովված են, իսկ Տիգրան Ավինյանի գրասենյակից մեկնաբանել են՝ «Գերիների վերադարձը կրկին հետաձգվում է»...

Ադրբեջանի ԱԳՆ-ն հայտնել է, թե նոյեմբերի 10-ից հետո արդեն փոխանցել են բոլոր հայ գերիներին:

Ըստ այդ երկրի ԱԳՆ ղեկավարի՝ ռազմագերիների հարցն արդեն լուծված է ու թեման փակ է, բոլոր հայ գերիներն էլ վերադարձվել են եռակողմ հայտարարության ստորագրումից հետո:

Ծնողները օդանավակայանում սպասում էին, իսկ դատարկ օդանավի մասին իմացան միայն օդանավը վայրէջք կատարելուց հետո:

Շշմելու աստիճանի անփութություն: Ինչու՞ այդքան ծնողներ բերեցիք օդանավակայան կամ ինչու՞ ավելի շուտ չասացիք, որ ոչ մի ռազմագերի չի վերադառնում: Սրանք որտեղի՞ց եկան մեր գլխին:

Comments

Lusine Nalbandyan – 2021-04-09 01:28:16
What does International Red Cross Committee say? They have used Artsakh war for fundraising, now we expect some results.